ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22.02.2021թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղար
Վ.Խաչատրյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Կ.Աշրաֆյանը, Ա.Մատինյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Ադլոյանը, Դ.Ստեփանյանը, Ա.Սահակյանը, Ն.Համբարձումյանը, Մ.Սարգսյանը, Ա.Թումանյանը, Հ.Մկրտչյանը- ստորաբաժանումների ղեկավարներ
Ա.Հարությունյանը -մարզպետի խորհրդական
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո ընկած ժամանակաշրջանում կատարված աշխատանքների մասին;

(զեկ. մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր;

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին, Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Կ.Աշրաֆյանին, մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչության պետի պաշտոնակատար Վ.Հովհաննիսյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչության պետի պաշտոնակատար Վ.Հովհաննիսյանին՝

Համայնքներում ստուգայցերի և ստուգումների ժամանակ վերհանել առաջացած խնդիրները, կազմակերպել քննարկումներ և առաջարկել անհրաժեշտ անհատական լուծումներ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Լոռու մարզում ներդրումներ կատարելու ցանկություն ունեցող անձանց հետ տանել անհատական աշխատանքներ, ցուցաբերել հնարավոր աջակցություն և ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի պաշտոնակատար Ն.Համբարձումյանին՝

Ամուսնալուծության հարցերը պահել ուշադրության կենտրոնում, յուրաքանչյուր դեպքում կազմակերպել քննարկումներ, անհրաժեշտության դեպքում ներգրավել համապատասխան մարմինների ներկայացուցիչներին, կատարել տունայցեր և միջոցներ ձեռնարկել դրանց հնարավորինս կանխարգելման ուղղությամբ:

2/22/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99